ՏԵՂԵԿԱՆՔ

Գործող օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 8. Հանրային խորհրդի անդամների գործունեության դադարեցումը

1. Հանրային խորհրդի անդամի գործունեությունը դադարեցվում է վարչապետի առաջարկությամբ՝ Կառավարության որոշմամբ, եթե՝

1) նշանակումից հետո ի հայտ են եկել փաստեր, որոնք հավաստում են նրա՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջներին անհամապատասխանությունը.

2) նշանակվել կամ ընտրվել է սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված որևէ պաշտոնում.

3) վերջին մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով չի մասնակցել Հանրային խորհրդի երկու անընդմեջ կամ ընդհանուր առմամբ երեք նիստերին.

4) չի պահպանել սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը:

2. Հանրային խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են նաև սույն օրենքի 5-րդ հոդվածի 12-րդ և 14-րդ մասերով նախատեսված դեպքերում: